

Հարգելի գործընկերներ,

Մի րով հրավիրում ենք Ձեզ մասնակցելու «Հայաստանի քաղաքական գործընթացներում քաղաքացիական հասարակության դերակատարության բարձրացման» ծրագրի շրջանակներում իրականացված քանակական հետազոտության արդյունքների ներկայացմանը, որը տեղի կունենա **2015 թ. նոյեմբերի 25-ին ժամը 11:00-ին «Կոնգրես» հյուրանոցի «Պիկասո» դահլիճում:**

Ծրագիրն իրականացվում է Հասարակական հետազոտությունների առաջատար խումբ (APR Group) ՀԿ -ի կողմից Հանուն ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի ֆինանսավորմամբ:

Հետազոտության նպատակն է պարզել Հայաստանի բնակչության վերաբերմունքը Սահմանադրության փոփոխությունների, այդ թվում երկրում տեղի ունեցող մի շարք գործընթացների վերաբերյալ: Հետազոտության խնդիրներն են պարզել, թե ՀՀ բնակիչները որքանով են տեղեկացված գործող Սահմանադրության և առաջարկվող փոփոխությունների նախագծի բովանդակության մասին, ինչպիսի վերաբերմունք ունեն Սահմանադրության փոփոխության գործընթացի հանդեպ և ինչպիսի ակնկալիքներ ունեն Սահմանադրության փոփոխությունից: Ուսումնասիրության ընթացքում պարզաբանվել են նաև այնպիսի հարցեր, ինչպիսիք են վստահությունը հանրաքվեի նկատմամբ, քվեարկության մասնակցության պատրաստակամությունը և այլն:

Միջոցառման ակնկալվող մասնակիցներն են ՀՀ Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի, Ազգային ժողովի, Կառավարության, կուսակցությունների, միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցները:


Կից տրամադրվում է միջոցառման օրակարգը: Խնդրում եմ հաստատել Ձեր մասնակցությունը հեռախոսազանգի (00 374 91 300 748/ 00 374 98 300 948) կամ էլ. փոստի (aprgroup@gmail.com) միջոցով:

Միջոցառման աշխատանքային լեզուն հայերենն է:

Ակնկալում ենք Ձեր մասնակցությունն այս միջոցառմանը:

Հարգանքով՝

Ռուբեն Սարգսյան,
Ծրագրի ղեկավար



«Հասարակական հետազոտությունների առաջատար խումբ» (APR Group) նախագահ